

284

Ր-53

4824

ՍԱՄՈՒԷԼ ՄՕՐԻՍ

(ՀՈԳԻՈՎ ԼԵՑՈՒՆ ԿԵԱՆՔ ՄԸ)



ՍԱՄՈՒԷԼ ՄՕՐԻՍ
(Իշխան Գապու)

Գրի առաւ՝ Վ. Ե. Ր. Տ. ԲԻՏ

1938

Տպարան ՍՍՀՍԿ-ՄԵՍՐՈՊ Գանիրէ

284
0-53

ՍԱՄՈՒԷԼ ՄՕՐԻՍ

(ՀՈԳԻՈՎ ԼԵՑՈՒՆ ԿԵԱՆՔ ՄԸ)



ՍԱՄՈՒԷԼ ՄՕՐԻՍ
(Իշխան Գապու)

Գրի առաւ՝ Վ.Ե.Ր. Տ. ԲԻՏ

2001

1938

Տպարան ՍՍՀՍԿ-ՄԵՍԻՐՈՊ Գանկրէ

2010

8119
~~5019~~

2012

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԲ

Արդեօք ուրիշ խօսք կա՞յ աւելցնելիք այս վրդովիչ պատմութեան վրայ մեր կողմէ: Իհարկէ ոչ. մեր կողմէ ըլլալիք էանի մը խօսքը գրեցիկի մասին է: Գովեստի խօսք ալ պիտի չընենք, գրեցիկը եւ անոր ընթերցումը այդ պատմականութիւնը պիտի կատարէ: Սակայն կուզեինք յիշել իր դասընկերներէն միոյն հետեւեալ վկայութիւնը, որ լաւագոյնս կը յայտնէ մեր զգացումն ու գաղափարն ալ սոյն գրեցիկի մասին: Ան կ'ըսէ, «նո՛ւ մը կայ որ կ'երթայ այս գրեցիկին հետ միասին, որ կը հալեցնէ սիրը, եւ ես կը փափաքիմ, որ *ամէն մարդ ունենայ հաս մը անկէ*: Մեծածաւալ փարոզադիրներէն աւելի լաւ է ան: Ես շատ ուրախ եմ վկայելու թէ՛ Սամմի այս ամեններ, որ այս գրեցիկը կ'ընէ զինքը, եւ աւելին: Ան էր, որ առաջին անգամ ըլլալով, փրսոնեութիւնը ինձի ըրաւ իրական:»

Արդարեւ, գրեցիկը կրնայ միջոց մը ըլլալ շատ մը անապատաւար հոգիներ ֆրիսոսի առաջնորդելու: Նոյնպէս ան կրնայ մղել շատ մը Հոգիէն պարպուած ալժմու փրսոնեաները Հոգիով լեցուելու: Օրինակները յաճախ վարակիչ կ'ըլլան, պիտի մաղթեինք որ Սամիին կեանքին օրինակը նոյն իմաստով վարակիչ ըլլար շատերուն, որոնք պիտի կարգան սոյն գրեցիկը:

Իսկապէս Տերոշը սուշեւ աշտուրիւն չկայ. սեւամորթ, անուռ, խեղճ խափելի տղայ մը, որ անվերապահօրէն նուիրած է ինքզինքը Յիսուսի, յանձնուած Սբ. Հոգիէն աւաշնորդուելու, զարմանալի չէ որ Ամերիկա-

32867-4.6.



(18015-58)

15451-58

յի մէջ համալսարան մը կը յեղաբերէ հոգեւորապէս եւ իր համբաւը, մանաւանդ ազդեցութիւնը, կը տարածուի Ամերիկայի հեռաւոր նահանգները, եւ իր մանուկական մանակ արեւայական քաղում մը կը կոտորուի իրեն եւ շատերը կուլան իր վաղահաս մահուան համար:

Այսօր ամեն տեղ, երեսնոցէ քաջ եղբայրներու եւ անհասներու անյետաձգելի եւ անհրաժեշտ պէտքեր՝ Պենէկոստեան այս այցելութեան է: Այս այցելութիւնն է՝ միակ լուծումը մեր դժուարութիւններուն, անլուծելի խնդիրներուն, դարձանք անմիաբանութիւններուն, ձախողութիւններուն:

Պէտք ունինք հոգիով լեցուած կեանքներու:

Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՕՐԻՍ ~ ԻՇԽԱՆ ԳԱՊՈՒ

(ՀՈԳԻՈՎ, ԼԵՑՈՒՆ ԿԵԱՆՔ ՄԸ)

Սամուէլ Մօրիսի կեանքին պատմութիւնը վէպի պէս կը կարգացուի. սակայն ճշմարտութիւնը վէպէն աւելի զարմանալի է: Ամենամաքուր հոգիներէն մէկը՝ որ երբեք բնական ըլլալ հոգէ տմանի մը մէջ, քաղցեց և ապրեցաւ մի քանի կարճ տարիներ, կրելով անբիծ կեանքի մը ճերմակ ծաղիկը: Անիկա օրինակ մըն էր թէ՛ Աստուած ինչ կրնայ ընել կեանքի մը հետ՝ որ բացարձակապէս իրն է:

Յիսուսի փիլիսոփայութիւնը թէ՛ մենք վերադարձնուելու ենք մանկական հաւատքի մը, Թադաւորութիւնը հասկնալու համար, օրինակելի կերպով յայտնուած էր Սամուիի կեանքին մէջ:

Սամուիի հաւատքը երբեք չերերաց կամ կասկածի տակ չառնուեցաւ, հետեւորար Աստուած որ աշխարհիս տկարները կ'ընտրէ, որպէսզի տաժարով ընէ զօրաւորները (1 Կոր. 1:27) Իր զօրութիւնը դրած էր անոր վրայ:

«Թէ որ մեր հաւատքն ըլլար պարզ յոյժ, իրողութիւնները կ'ըլլային մերը»:

Մեր կեանքը պիտ' դառնար ժըպիտ լոյս Քաղցրութեամբը փրկչին՝ մեր Տէրը»:

Եւ իր պարզ, հաւատարիմ և վստահելի կեանքը ճշմարտապէս Աստուծոյ կը պատկանէր, ինչպէս ո'րեւէ

հին մարգարէի մը կեանքը: Ինչպէս Բիւթանեացի կընկան նուիրման գործը՝ իր Տէրը օծելուն մէջ, քիչ խորհելով, թէ իր արարքը պիտի ապրի Սբ. Գրոց արձանագրութեան մէջ, որպէս մշտնջենական յիշատակ մը մէկուն՝ որ կ'ընէր իր կարելին Այսպէս Սամմիին կեանքը պիտի մնայ՝

Մինչև արեւն պաղի,

Եւ բացւին գիրքերն դատաստանի:

Իր նախնական կեանքը. — Սամուէլ Մօրիսի նախնական կեանքին մասին միայն իրմէ լսածներս գիտեմ: Ուրիշ մէկէն կարելի չէր սորվիլ: Ո՛չ մէկը գիտէր իր մօրմէն և տունէն բաժանման պարագաները, իր կրած չարչարանքները. ո՛չ մէկը գիտէր խարաղանի տանելի այն հարստաները, զորս անգութ տէրը կ'իջեցնէր անխնայ իր դողդողջուն կռնակին վրայ: Ո՛չ մէկը գիտէր հրաշալի փախուստը, և թէ Տէրը ինչպէ՛ս առաջնորդեց զինքը անապատին մէջէն մինչև որ հասաւ ծովագերք և աղատեցաւ: Այս բոլորը իրմէ լսած եմ քանի մը անգամներ, և պահած եմ զանոնք անմոռանալի կերպով յիշողութեանս մէջ: Ինծի համար այս պարզ, խափշիկ աղան ամէնօրեայ զարմանք մըն էր, երեւելի հրաշքը՝ Աստուծոյ անհուն շնորհաց: Ես կը սիրէի զինքը եղբօր մը պէս, և իրմէ սորվեցայ հաւատքի և նուիրումի դասեր, որոնց ես նախապէս բոլորովին օտար էի: Մի՛ անարգեր զինքը, որովհետեւ ինզճ, սեւամորդ աղայ մըն է ան: Քրիստոս սիրեց զինքը և փրկեց, և կեանքի մաքուր լոյսին մէջ այժմ ան ճերմակ է, և իր արիւննով լուսացուած հանդերձները այնքան ճերմակ են, որ ո՛չ մէկ թափիչ աշխարհի վրայ կրնայ շինել զանոնք:

Մի՛ արհամարհեր այն խեղճ, սեւ մարմինը, որովհետեւ Սբ. Հոգին ըրաւ զայն իր տաճարը:

Սամուէլ Մօրիս, Լիպերիացի Քրու ցեղէն թագաւորի մը աղան էր: Ան ափրիկեցիներու ափրիկեցին էր, կատարեալ խափշիկ մը: Երբ կ'ըսենք թէ թագաւորի մը աղան էր, առ չի նշանակեր, անշուշտ, թէ իր հայրը հօգօր ինքնակալ մըն էր, որովհետեւ իր երկրին մէջ թագաւոր մը ըլլալու համար, բաւական էր շինել քաղաք մը, և իշխել այն ժողովուրդին վրայ որ կը դիմէ իրեն հետ միասին բնակելու և իր պաշտպանութիւնը վայելելու: Երբեմն այս փոքր թագաւորներ կամ ցեղապետներ կ'իշխէին հարիւրի չափ մարդոց վրայ: Սամուէլին հայրը այս պետերէն մէկն էր, որոնք կը կոչուէին Քրուներ և կը բնակին արեւմտեան Ափրիկիոյ մէջ:

Սամուէլ դեռ պզտիկ աղայ, իբր պատերազմական գերի տարուած էր երբ իր հայրը ուրիշ ցեղապետի մը հետ կը պատերազմէր: Գերեվար ցեղապետը վար դրաւ զինքը այն յոյսով, որ իր ժողովուրդը փրկանք պիտի վճարէ զինքը ազատելու համար: Կ'ենթադրէ թէ այդպէս եղաւ, որովհետեւ քիչ ետքը զինքը վերադարձուցին իր ժողովուրդին, և մնաց մինչև տասնը մէկ տարեկանին երբ կրկին առեւանգեցին զինքը, և վար դրին իբր պատանդ: Այս երկրորդ գերութենէն շատ յետակ յիշատակներ ունի: Անգամ մը, կ'ըսէ, հայրըս եկաւ զիս փրկելու, սակայն՝ պահանջուած զինը վճարելու կարող չեղաւ: Իր մատուցած դրամը կը բաղկանար փղոսկրէ, հնդկական ձգախճէ և ապորնը ման ուրիշ նախանիւթերէ: Ասոնք էին երկրին գլխաւոր շրջաբերութեան հանուած բաները դրամի փոխարէն: Ասոնցմէ զատ հայրը առաջարկած էր տալ Սամմիին քոյրն ալ, իրմէ պզտիկ, և աղջիկ ըլլալով, հետ թանոսներու գաղափարով, աղու հետ բաղդատմամբ աւելի նուազ յարգ ունէր:

Սամմի խնդրեց իր հօրմէն թէ՛ այսպիսի սակարկութիւն չընէ, ըսելով թէ, ինքը մի՞նչ ըլլալուն աւելի կարող էր առկալ գժուարութեանց քան իր պղտիկ քոյրը: Երկու պետեր կամ թագաւորներ չկրցան զալ համաձայնութեան և Սամուէլ մնաց իբր պատանդ: Ասկէ վերջն է որ իր կեանքը կ'ըլլայ տեւական տառապանքի տեսարան մը:

Այն ցեղապետը որ կը պահէր զինքը իբր պատանդ՝ միտքը դրած էր որ իր հայրը ստիպէ որոշուած փըրկանքը վճարելու, և այսպէս սկսաւ աղան խոշտանգել ժմէն օր: Ուշադրութիւն ընելով որ անոր հայրը տեղեակ պահուի եղածէն: Սամուէլ ըսաւ ինքի. «Այս անգութ մարդը ժմէն օր կը խարաղանէր և կը խոշտանգէր զիս առանց պատճառի, և ժմէն օր աւելի կը սաստկացնէր»:

— Ինչո՞վ կը խարաղանէր, հարցուցի:

— Ոհ, հասա չուանի նման որթատունկի ճիւղով:

— Հագուստներդ հանել կուտո՞ր, հարցուցի:

— Ոհ, Մ. Բիտ, ըսաւ խնդալով, հագուստներս հանե՛լ. մենք հագուստ չէինք հագուեր: Ո՛չ շապիկ, ո՛չ բաճկոն, ոչ տափտա կայ մեր երկիրը: Այսպէս խարաղանը կ'իջնէր այս խեղճ աղուն մերկ կռնակին վրայ այն բարբարոս և հռեժիւ ձեռքով, որ չէր գիտեր գութ, այլ կը խորհէր մէկ բանին վրայ միտին այսինքն՝ իր գերիին վրայ դրուած գինը ապահովելու: «Վերջապէս, կ'ըսէ Սամմի, խոշտագումը այնքան սաստկացաւ որ այլևս չկրցայ առկալ և սկսայ հարուածներուն տակէն փախչիլ գէպի սնտառները, առանց գիտնալու թէ ո՛ւր կերթայի» Սակայն Աստուած որ հոգաց Իսմայէլը երբ իր մայրը նետեց զինքը աւազին վրայ և անցաւ զընաց որպէսզի հասնէ իր մեռելիլը, հոգաց զինքն ալ:

Իրէն համար գործ կար ընելիք: Աբրահամի նման Աստուծոյն օրհնուած էր, և փոխադարձաբար ուրիշներուն օրհնութիւն պէտք էր ըլլար: Այսպէս իր ճամբան ընալը ուսած էր: Տէրը առաջնորդեց զինքը անպատին մէջէն, տեղէ տեղ, մինչև որ հասաւ ծովեզերք: Ուր քան երկար ճամբորդեց չեմ գիտեր, ինքն ալ չէր գիտեր սրկայն, ան օրեր տեւեց և զանազան փորձանքներէ և վտանգներէ անցած էր: Ան հեթանոս աղայ մըն էր, հետեւորար Աստուծոյ մասին բան մը չէր գիտեր, սակայն նախախնամութիւնը, որ կը կերակրէ ճնշողունները, կերակրեց զինքը, և այն զօրութիւնը որ առաջնորդեց մոգերը Բեթղեհէմ, առաջնորդեց այս խեղճ աղան ծովեզերք և Քրիստոսի:

Ծովեզերք հասնելէն ետքը սուրճի արտի մը մէջ գործելու կ'երթար, և իր ծառայութեան փոխարէն կը ստանար գիշերելու տեղ մը և պարզ հագուստեղէն որ կը գործածուէր այն երկրին մէջ՝ տեղացիներու կողմէ: Հոս էր որ Քրիստոսը գտաւ և մտաւ այն կրօնական կեանքին, որ թէպէտ էր շատ կարճ, և բայց եղաւ իր պարզ սակայն իր հաւատքին ու նուիրման վսեմ զարգացումովը՝ գիտցածներուս ժմէնէն հրաշային: Կը թուէր թէ աղայ մը իրեն ազգակից, կը գործէր միեւնոյն արտին մէջ Սամմիին հետ, և այս աղան քրիստոնեայ եղած էր իրմէ առաջ:

Այս յիշեալ աղան Սամմիին խօսած էր Յիսուսի մասին և եկեղեցի տորած: Սամմի այն տառն բառ մը իսկ չէր հասկնար Անգլիերէն, չէր կրնար ըմբռնել իմաստը՝ Եկեղեցի, Աստուածաշունչ, քարոզիչ և ուրիշ բառերուն, սրանք կը հանդիպէին իր խոշոր բացած աչքերուն: Սակայն ան կ'ըսէր թէ կը զգար որ Աստուած այն տեղ է, և թէ կը գիտակցէր սենեակը լեցը:

նող մաքուր և տհաւոր էակին ներկայութեանը, կը գգար նաեւ թէ ինքը մեղաւոր և կորսուած մըն էր։ Ան առաջին պաշտամունքէն՝ բաժնուեցաւ ցաւող սըրտով և որոնող մաքուր։ Ան կը խորխորփէր իր ճամբան՝ Եթովպացի ներքինիին նման և պէտք ունէր Փիլիպպոսի մը՝ զինքը առաջնորդելու։ Իր ընկերոջ աղօթելը տեսած և հարցուցած էր թէ ի՞նչ կ'ընէր, ան ըսեր էր իրեն թէ Աստուծոյ հետ կը խօսի։ «Ո՞վ է Աստուծոյ, հարցուցեր է Սամմին»։ «Ան իմ հայրն է, պատասխաներ է միւսը»։ «Ուրեմն, ըսեր է Սամմի, իրերը դնելու իր գործնական ձեւովը՝ դուն կը խօսիս Հօրդ հետ»։

Աղօթքը «Հօրը հետ խօսիլ» կը կոչէր։ Անմիջապէս որ եկեղեցի յաճախելով կը համոզուէր իր մեղաւոր ըլլալուն, ինքն ալ կը սկսի Հօրը հետ խօսիլ։ Իր ապաշխարութիւնը թեթեւ և երեւութական չէր, ինչպէս որ հասարակ դարձեր է այս օրերս։ Անիկա ապաշխարութիւն մըն էր, որ կը պատահէր հին ժամանակներու արթնութեանց տաննները։ Անիկա պարզ զըզջում չէր և հետեւաբար կը մղէր զինքը Հօրը հետ խօսելու անեղանակ ժամերուն մէջ, և այնքան խորունկ ապաշխարութիւն մըն էր, որ կը մղէր զինքը խօսելու շատ բարձր ձայնով մը։ Իր տաքնապալից աղաղակները, երբեմն կը խոնգարէր կէս գիշերուան ժամերուն լուսնինը։ Վերջապէս իր բանուոր ընկերները ձանձրացուցիչ կոչեցին զինքը և իմացուցին որ եթէ չպիտի լռէ, պէտք է ձգէ այդ տեղը։ Անկէ յետոյ ան իր աղօթալայրը փոխադրեց անտառ, և հոն կը գտնեմարտէր հրեշտակին հետ՝ գիշերէ գիշեր, ինչպէս ըրաւ Յակոբը՝ Փանուէլի մէջ։

Գիշեր մը մնաց անտառին մէջ, աղօթելով մինչև

կէս գիշերէն վերջը և եկաւ իր խոնարհ բնակավայրը յոգնած և սրտով ճնշուած ու պառկեցաւ քնանալու համար, սակայն չէր կրնար։ Ան կ'ըսէր թէ, լեզուն չէր խօսեր, բայց սիրտը կը շարունակէր աղօթել։ Յանկարծ կը տեսնէ իր սենեակը լուսաւորուած։ Ան նախ կը խորհի թէ արեւը կը ծագի, սակայն իր շուրջը ամէն մարդ խորունկ քունի մէջ էր, իսկ սենեակին լոյսը հետզհետէ աւելի կը շաղկապէր, մինչև որ տեղը լեցուեցաւ Տիրոջ փառքով։ Միեւնոյն ժամանակ իր բնակը, որ կը ճնշէր իր վրայ, անյայտացած էր։ Սիրտը ուրախութեամբ լեցուն և իր մարմինը փետուրի նման թեթեւ կ'երեւար։ Կարծեցի որ պիտի թռչիմ, կ'ըսէր։ Կը սկսի պոռալ, ցատկել և գովել զԱստուծոյ, ինչպէս ըրած էր այն կողմ մարդը, որ բժշկուեցաւ տաճարին գեղեցիկ կոչուած դրան տուէր։ Ան չուտով կ'արթնցնէ հոն քնացողներուն ամէնը, և այլեւս այդ գիշեր քուն չկար։ Ոմանք խորհեցան որ իր խելքը թուցուցեր է, իսկ ուրիշներ յիշելով իր հեթանոսական նախապաշարունակները, կը կարծէին թէ դեռ մը բռնուած է։ Ահա այսպէս էր իր դարձը՝ պարզ, դրական և հզօր։ Ան չէր կրնար կասկածիլ իր դարձին վրայ, և իր սոսմանափակ ծանօթութիւններով հանդերձ, ասկէ աւելի պակասով ալ չէր կրնար գոհանալ։ Ընդհանուր առումով Սամմի ցուցամով չէր, սակայն երբ պէտք ըլլար խօսիլ իր դարձին վրայ, իր աչքերէն կրակ կը փայլէր և ամբողջ մարմինը կը դողար յուզումէն։

Որքան տեսն մնաց սուրճի այս արտին մէջ, չեմ գիտեր, սակայն բաւական տեսն մնաց, մինչև որ անգլիներէն խօսիլ սորվեցաւ և քիչ մըն ալ գրել կարդալ։ Բաւական երկար ժամանակ էր նաև նոր անուն

մը ստանալու համար իր հեթանոս անունը Գուպու էր, բայց անիկա փոխուած էր Սամուէլ Մօրիսի՝ միսիօնարուհիի մը կողմէ, որ իրեն դաս տուած էր և սորվեցուցած Աւետարանի քաղցր և պարզ դասերը։ Սուրճի արտը ձգելէն յետոյ ծովեզերեայ քաղաք մը եկաւ, ուր սորվեցաւ առններ ներկելու արհեստը, և կ'երեւելայդ արհեստին մէջ աշխատեցաւ քանի մը տարիներ։

Քաղաքելու կանչուած.— Այն ժամանակները ինքը կանոնաւոր յաճախող մըն էր կրօնական պաշտամունքներու, որոնք կ'աւաջնորդուէին միսիօնարներու կողմէ տեղւոյն վրայ, և միշտ խորապէս համոզուած էր թէ՛ իր պարսականութիւնն է քարոզել իր ժողովուրդին՝ օրհնեալ Քրիստոսը, որ զինքը փառաւորապէս փրկած էր։ Օր մը Սմբըլ անունով միսիօնարին կ'երթայ, և կը պատմէ իր սրտին մէջ եղածը այդ խնդրոյն վրայ։ Միսիօնարը կ'ըսէ իրեն, որ իր ժողովուրդին քարոզելու համար ուսում պէտք է, այդ ուսումը ստանալու համար Ամերիկա երթալու է, և Ամերիկա երթալու համար հարիւր տոլար ունենալու է։ Այս երեք կէտերը մտքին մէջ առած Սամմի կ'արտորայ դէպի անտառ՝ սովորական աղօթալայրը, Հօրը հետ խօսելու։ «Ա՛րդ, ով Հայր, կ'աղօթէ Սամմի, դուն զիս կանչեցիր իմ ժողովուրդիս քարոզելու, սակայն միսիօնարը կ'ըսէ թէ ես չեմ կրնար քարոզել առանց ուսմունքի, և թէ այս ուսման համար Ամերիկա երթալու եմ։ Հայր գիտես որ Ամերիկա երթալու համար մէկ սէնթ անգամ չունիմ, խնդրեմ ճամբայ բաց երթալու»։ Երբ յիշեց ինծի այս դէպքը, իր պարզ և բընական ձևովը աւելցուց. «գիտէի որ Ան ճամբան պի-

տի բանար»։ Այն օրէն իվեր որ այս անսեթեւեթ աղօթքը ըրաւ այդ խնդիրը կարգադրուած նկատեց և միշտ կը նայէր այն նաւուն համար որ զինքը Ամերիկա պիտի տանի։ Հոս պիտի յիշենք ուրիշ պարագայ մըն ալ մասնաւորաբար մզեց զինքը Ամերիկա մեկնելու։ Ծիշդ այս տախտիկները հոն ժամանած էր ուրիշ երիտասարդ միսիօնարուհի մը, զրկուած Պօրտին քարտուղար Սթեֆան Մէրրըթի կողմէ։ Սթեֆան Մէրրըթ եղած էր մեր Նիւ Եօրքի ամենէն հոյակապ և օճեալ տեղական քարոզիչներէն մէկը։ Հիմա խօսքը կուտանք Սթեֆան Մէրրըթի՝ պատմելու Սամմիյին Ամերիկա երթալու և յարակից կարգ մը պարագաները։ Ան կ'ըսէ. «Մ. Նահանգաց արեւմտեան նահանգներէն աղջիկ մը եկաւ ինծի և փափագ յայտնեց երթալ Ափրիկէ և գործելու Պիլըֆ Թէյլըրի հետ և ես իբր քարտուղար զինքը ընդունեցի։ Ես մօտէն ծանօթացած էի Սթ. Հոգույն հետ, և անշուշտ Անով լեցուած էի իմ սրտիս յաւելուածէն խօսեցայ միսիօնարուհիին, ու ըսի որ, եթէ Սթ. Հոգին ընդունի պիտի յաջողի Ափրիկիոյ իր գործին մէջ, պիտի չհիւանդանայ, մինակ պիտի չղգայ ինքզինքը և ոչ ալ յոգնածութիւն։ Սթ. Հոգին պիտի ըլլար իր ուժը, իմաստութիւնը միսիօնարութիւնը, և իր կեանքը պիտի ըլլար շարունակական աղմուսերգութիւն այդ խաւարակու երկրին մէջ։ Նա մտիկ ըրաւ, փափաքեցաւ խնդրեց և Ան եկաւ միայնուն ներկայութիւն մը։ Նա բաժնուեցաւ Հոգիով լեցուած։ Իր ընկեր միսիօնարները կը խորհէին թէ՛ նա պիտի ձախողի, որովհետեւ ինքզինքը հեռու կը պահէր, և առանձին կը նստէր, կը խօսէր, կը խնդար, կուլար։ Անոնք կը խորհէին, որ այս բոլոր արարքները իր ետին ձգած սիրահարին համար է։ Նա սիրահարը իր հետը ունէր, և այս էր պատ-

ճառը այդ տարրորինակութիւններուն: Նա հասաւ իր կայանը, սկսաւ իր գործին գոհ, երջանիկ և ուրախ:

«Քրու աղան՝ Սամուէլ Մօրիս, լսելով այդ միախոնարունիին գալը, մղոններով կը ճամբորդէ զինքը տեսնելու և Յիսուսի մասին խօսելու իր հետը: Նա Հոգիով լեցունած էր և կը յորդէր և ուրախ էր խօսելու Սբ. Հոգւոյն վրայ Սամուէլին: Սամմին կը խանդավառուէր և կը փափաքէր, և որոշած էր գիտնալ Աստուածային Միութարիչը:

Ճամբորդութիւն ճամբորդութեան վրայ կը կատարէր, ժամերով խօսակցութիւն կ'ունենար սիրելի նիւթին վրայ, երբ նա յոգնած շարունակ կրկնելէ միեւնոյն բաները, ըսաւ. «Եթէ աւելի կ'ուզես գիտնալ, պէտք է Նիւ Եորք երթաս Սթէֆան Մէրրըթին քովը, ան խօսած է ինծի ալ Սբ. Հոգւոյն վրայ գիտցած բաներաւ:» «Կ'երթամ», ըսաւ Սամմի, անկից յետոյ միախոնարունիին հասաւ զինքը:

«Այդ տեսնները ծովեզերք կը հասնի նաւ մը և խորիւս կը նետէ ծովեզերքէն հեռու, սակայն նաւակ մը կուգայ ծովափ: Սամմի նաւակ կ'ելլէ և կը խընդրէ նաւապետէն որ զինքը Նիւ Եորք տանի: Նաւապետը կը մերժէ զինքը անէծքով, սակայն ան կը պատասխանէ. «Ոհ, այո, դուն պիտի տանիս»: Այն գիշեր աւազին վրայ կը քնանայ, հետեւեալ օրը կրկին գիտում կ'ընէ, դարձեալ կը մերժուի: Երրորդ անգամ նորէն կը դիմէ առանց բանէ մը վախճալու: Նաւապետը կը հարցնէ թէ ի՞նչ գործ կրնայ ընել, և ինքը կը պատասխանէ թէ ամէն ինչ որ ինքը կրնայ ընել: Նաւապետը խորհելով որ լաւ կազմով նաւաստի մը կրնայ ըլլալ, և որովհետեւ երկու երեք հոգի իր մարդոցմէ դասուիք եղեր էին և ինքը մարդու պէտք ու-

նէր, հարցուց թէ ի՞նչ կ'ուզէր վճարում: Սամմի պատասխանեց. «Ես կ'ուզեմ տեսնել Սթէֆան Մէրրըթը»: Նաւապետը կը հրամայէ իր մարդոց որ Սամմին տանին նաւը:

«Ան նաւ հասաւ, սակայն ո'չ ծովու վրայ և ոչ ալ նաւու վրայ տեղեկութիւն մը հունէր: Սարիւսը վերցընեցաւ և ինքը գնաց: Իր ազիտութիւնը շատ փորձանք բերաւ իր գլխուն: Ապտակ, անէծք, տքոցի իր աւատ բաժինն էր, սակայն իր խաղաղութիւնը գետի նման էր, իր վստահութիւնը Տիրոջը վրայ անսահման և քաղցր էր: Քիչ տեսնէն նաւապետը ապաշխարեց և դարձի եկաւ. կրակը տարածուեցաւ նաւուն մէջ, և նաւաստիներուն կէսը կամ աւելին փրկուեցան: Նաւը եղաւ Բեթել մը, երգեր, գովաբանական աղողակներ կը լսուէին, և այս կոչա ու այլանդակ Քրու աղուն համար ո'չ մէկ բան աւելի տղէկ էր:

«Սամմիին զէպի Ամերիկա ճամբորդութեան ժամանակ երկու դէպքեր տեղի ունեցան, որոնք կը ծառայեն ցուցնելու իր սքանչելի հաւատքը: Ճամբորդութեան երրորդ օրը շատ կը հիւանդանայ: «Երբեք կեանքիս մէջ հիւանդացած չէի», ըսաւ ան. «Այդ պարագային ի՞նչ ըրիր» հարցուցի:

— Օ՜ ծուռկի եկայ և լսի. «Հայր, գիտես որ ես այս մարդուն խոստացայ գործել ամէն օր, մինչեւ Ամերիկա հասնիլս, սակայն հիմա չեմ կրնար, քանի որ հիւանդ եմ»: Եւ այդ վայրկեանէն ան աղէկցած և գործի սկսած էր:

«Իր գործը կայմին վրայ էր: Գործ մը որ երբեք չէի սիրեր, ըսաւ ան ինծի: Օր մը դարձեալ կայմին վրայ գործելու կը ղրկուի, այն օրը սաստիկ կ'անձրեւէր և հովը սաստիկ կը շարժէր նաւը, և կայմը կը

տատանէր տերեւի մը պէս այնքան որ կարծես նաւը պիտի տապալէր: Անձրեւը աչքերուն կը զարնէր, դըրեթէ կը կուրցնէր զինքը: Փոթորիկին ու սաստիկ մրրիկին մէջտեղը այսպէս կը խօսի իր Հօրը. «Հայր, ես չեմ վախնար, որովհետեւ գիտեմ որ զիս պիտի պաշտպանես, սակայն ես չեմ ուզեր կայմին վրայ ըլլալ: Չե՞ս ուզեր այնպէս մը ընել, որ ես այլեւս հոս կրկին չգամ, գիտէի որ պիտի ընէր, աւելցուց ան: Հետեւեալ օրը գործ կար ընելիք վերը, և Սամմի ուրիշ ընկերոջ հետ կը քալէր դէպի իր գործը: Երբ կայմին կը հասնի, միւս նաւաստին կ'ըսէ. «Սամմի, դուն չես սիրեր կայմին վրայ գործել և ես չեմ սիրեր սենեակին մէջ գործել, դուն վարը գնա իմ գործըս ըրէ, ես ալ քու գործը ընեմ»: Այսպէս Սամմիին աղօթքը լսուեցաւ և երբեք անգամ մըն ալ կայմին վրայ չեկաւ:

«Երբ նաւը կը հասնի Նիւ Եորքի նաւահանգիստը, Սամմի հրաժեշտ առնելէն ետքը իր ընկերներէն, իր պայուսակը ձեռքը, որ կը պարունակէր իր հագուստները՝ տրուած իր նաւաստի ընկերներուն կողմէ — որովհետեւ երբ նաւ մտաւ վրայի հագուստը ունէր միայն: Փայք փողոցը ցամաք կ'ելլէ և առաջին հանդիպած մարդուն կը հարցնէ. «Ո՞ւր է Սթէֆան Մէրրիթը»: Ասիկա տեղի կ'ունենար իմ գտնուած տեղէն 3-4 մղոն հեռու, քաղաքին այն մասին մէջ, ուր ես բոլորովին անծանօթ էի, սակայն Սթ. Հոգին ատիկա կարգադրեր էր: Այն մարդը որուն այդ հարցումը ուղղած էր «Ճամբորդներու Գլխաւոր»ին պատկանող մէկն էր, կ'ըսէ իրեն, «Ես զայն կը ճանչնամ, ան կը բնակի քաղաքին միւս կողմը, քեզ կը տանիմ անոր եթէ տոյար մը վճարես ինձի»: «Շատ լուս» կ'ըսէ Սամմին,

թէպէտ քովը մէկ սէնթ անգամ չունէր:

«Անոնք հասան երբ ես աղօթածողով մեկնելու վրայ էի, երբ բերող մարդը ըսաւ, «Ահա ինքն է»: Սամուէլ յառաջանալով հարցուց, «Դուք Սթէֆան Մէրրիթն է՞ք»: «Այո՛, պատասխանեցի ես»: «Ես Սամուէլ Մօրիսն եմ, ճիշդ հիմա եկայ Ափրիկէէն քեզի հետ խօսելու Սթ. Հոգւոյն վրայ»:

— Ինքնութիւնդ յայտնող նամակներ ունի՞ս:

— Ո՛չ, սպասելու ժամանակ չունէի:

— Շատ լուս, ես այժմ կ'երթամ ձէյն փողոցի աղօթածողովը, կ'ուզե՞ս դուն ալ երթալ Միշընի ժողովը, որ յաջորդ դուռն է, վերադարձիս կը կարգադրեմ գործդ:

— Շատ աղէկ ըսաւ, Սամմի «էյ պարոն, ու՞ր է իմ տոյարս հարցուց, անդիէն զինքը բերող մարդը»: «Օ՛, Սթէֆան Մէրրիթ կը վճարէ իմ պարաքս հիմա ըսաւ Սամուէլ»: «Ո՛հ, անշուշտ ըսի», և անմիջապէս վճարեցի տոյարը:

«Ես աղօթածողով գացի, ինքն ալ Միշընի մէջ տեղի ունեցող ժողովին: Ես զինքը մոռցած էի մինչեւ որ ես երեկոյեան 10.30 ին ատենները բռնալին դրի դուռս բանալու համար յանկարծ Սամուէլ Մօրիս միաքս ինկաւ: Անմիջապէս վերադարձայ. զինքը գտայ ապիտոնին վրայ իր շուրջը տասներեօթը հոգի երեսնին վրայ ինկած: Ան պարզապէս Յիսուսը մտանոնիշ ըրած էր անոնց, և անոնք կ'ուրախանային Յիսուսի փրկարար շնորհին համար: Ես այդպիսի տեսարանի մը երբեք հանդիպած չէի: Սթ. Հոգին երեսնոսէ այս մարմնոյն մէջ՝ իր բոլոր չըջապատովը նւարիս պաշկեք մըն եր:

«Որո՞հէ՛ պահ մը. անուս, կոշտ, առանց զարգացումի, սակայն Սթ. Հոգիով օգտուած, զնցուած և թա-

185-51081/85-15451



թաւուն Ափրիկեցի մը, Սբ. Հոգւոյն ներգործութեան ներքեւ, Ամերիկայի մէջ առաջին գիշերը Էմմանուէլի համար հոգիներ կը շահի, մօտաւորապէս քսան Զինքը հոգալու ոչ մէկ դժուարութիւն այժմ, ան Աստուծոյ օծեալներէն մէկն էր։ Այն օրը Ուրբաթ էր։ Շաբաթը անցուց տաղին ու անդին։ Կիրակի օրը ըսի։ «Սամուէլ կ'ուզեմ որ այսօր ինծի հետ գաս Կ. դպրոց, ես վերակացուն եմ սոյն դպրոցին, և կարելի է խնդրեմ քեզմէ այնտեղ, որ քանի մը խօսք խօսիս»։ Ան՝ պատասխանեց և ըսաւ. «Ես երբեք Կ. դպրոցի մէջ գտնուած չեմ, սակայն կ'ընդունիմ»։

«Ես ժպտելով զինքը ներկայացուցի իբր Սամուէլ Մօրիս մը, որ եկած է Ափրիկէէն խօսելու ձեր վերակացուն հետ՝ Սբ. Հոգւոյն վրայ։ Ձեմ գիտեր թէ ինչ ըսաւ, դպրոցը խնդաց, և երբ սկսաւ իմ ուշադրութիւն գրաւուեցաւ, երբ նայեցայ ահա խորանը լեցուած էր լացող և հեծկլատող երիտասարդներով։ Ես չէի կրնար գտնել իր ըսածներէն բան մը, սակայն Սբ. Հոգւոյն ներկայութիւնը և բացայայտ զօրութիւնը, այնքան զգալի էր, որ ամբողջ տեղը լեցուած էր Տէրոջ փառքովը։

«Երիտասարդներ, «Սամուէլ Մօրիս Միսիոնարական Ընկ.» մը կազմեցին և դրամ, հագուստ և ուրիշ պէտք եղած բաները ապահովեցին զինքը զրկելու համար Պիշըի Ուիլեմ Թէյլըր համալսարանը։ Դպրոց չգացած մեզի հետ անցուցած օրերը լաւ օրեր էին։ Զինքը օր մը քառամբակ վազող ձիերով կառքի մը մէջ աւել, որովհետեւ յուզարկուորութեան պաշտօն մը կատարելու պիտի երթայի։ «Սամուէլ ըսի, մեր ճամբուն վրայ կ'ուզեմ ցուցնել քեզի կարգ մը բաներ մեր քաղաքին մէջ, և կեդրոնական հանրային պարտէզը»։

Իրեք կեսնքին մէջ կառք նստած չէր, ոչ ալ ձիերու ետեւը կեցած, որոնց իր վրայ ըրած ապաւորութիւնը խնդալիք բան էր ինծի համար։ «Սամուէլ ըսի, ասիկա մեծ Օրերայի տուն է», և սկսեւ էի բացատրել երբ ըսաւ ինծի. «Սթէֆան Մէրրըթ կառքին մէջ երբեք ազօթած ես»։ «Ո՛հ, այո՛, պատասխանեցի, յաճախ երջանիկ ժամանակներ ունեցած եմ կառքով գացած տոննա»։ Ան իր մեծ և սեւ ձեռքը խմինիս մէջը դրաւ և ծունկիւրուս վրայ քաշելով ըսաւ. «Պիտի աղօթենք»։ Եւ ես առաջին անգամ ըլլալով ծնրադրեցի աղօթելու կառքին մէջ։ Ան այսպէս ըսաւ Սբ. Հոգւոյն, «Ես եկայ Ափրիկէէն Քու վրայ խօսելու Սթէֆան Մէրրըթի հետ և սակայն Սթէֆան Մէրրըթ կը խօսի ինծի հետ Քեզմէ զատ ամէն բանի վրայ։ Կուզէ ինծի ցուցնել հեղեղներ, քաղաքը, մարդիկը, երբ ես այնքան կը վախժարեմ լըսելու և գիտնալու Քու մասիդ»։ Եւ ան իր աղօթքին մէջ կը խնդրէր Տէրոջմէն որ վերցնէր իմ սրտէս Իրեքը և լեցնէր զիս Անով այնպէս որ չգրէի, չքարոզէի չխօսէի Իրմէ զատ ուրիշ բաներուն վրայ։ Այն օրը երեք հոգի կար կառքին մէջ։ Այսպիսի օր մը ես ունեցած չէի երբեք։ Լեցուած էինք Սբ. Հոգիով, և Ան՝ Սամմին ըրաւ միջոց մը, որով ես հրահանգուէի, հաստատուէի որեւէ ժամանակէն աւելի։

«Նպիսկոպոսներ ձեռքերնին դրած էին գլխուս վրայ, և ես մտանդակներ էի ուրիշ երեցներուն ձեռնադրութեան ժողովներուն, սակայն բաղդատմամբ ո՛չ մէկ ուժ եկած էր։ Ծէյմըս Գօկէյ դրաւ իր սուրբ ձեռքերը գլխուս վրայ և սիրելի Թոմաս Հարիչընի գլխուն վըրայ, և երբ կ'աղօթէր որ Եղիային վերադառնա իյնար Եղեօէներուն վրայ և կրակը ինկաւ և զօրութիւնը Եղեօէն, սակայն Միսիոնարիչին ընտկութիւնը ստացուած էր

կառքին մէջ Սամուէլ Մօրիսի հետ, որովհետեւ այն տանէն իվեր չեմ գրած տող մը, չեմ խօսած խօսք մը, եթէ ոչ միայն Սբ. Հոգիով և Սբ. Հոգւոյն համար»

Թեյլը համալսարանը կը մտնէ: Մր. Րիտ կրկին շարունակելով կ'ըսէ: «Աստի՛ն սննդական ծանօթութիւնս Սամուէլ Մօրիսին հետ, նամակի մը միջոցաւ եղաւ զրկուած Սթէֆան Մէրրըթի կողմէ, Տոքթ. Սթիմընի՝ համալսարանին նախկին նախագահին: Այս նամակին մէջ Մէրրըթ կը խօսէր Սամի Մօրիսին նիւ Եօրք համակուէն և Թեյլըր համալսարանը մտնելու մասին և կ'ըսէր որ, ձէյն փողոցի եկեղեցիին բարի մեթոտականները հոգ պիտի տանին հազուադէպ համար այս հերոս խափշիկ աղուն և պիտի զրկեն համալսարանը եթէ մենք յանձն առնենք իր դպրոցական ծախքը հոգալ՝ համակուէն վերջը Տոքթ. Սթիմըն նամակը ինծի բերաւ խորհրդակցութեան համար թէ ի՞նչ կարելի էր ընել: Համալսարանը դեռ նոր էր և կը տապալկէր պարտքի տակ, որ ժառանգն էր հիմնադրութեան տեղնեքէն: Մասնաւոր ֆօնտ մը չունէինք այս անակնկալ ծախքը հոգալու, այսու ամենայնիւ երկուքնիս ալ կ'զգայինք թէ գործը Աստուծոյն էր, և մենք չէինք կրնար մերժել:

«Հոս կրնամ ըսել թէ՝ տարիներէ իվեր մտահոգ էի օգնելու ազատ երիտասարդներուն, որոնք կ'ուզէին պատրաստուիլ քարոզչութեան համար, և ես կաթոգին կը յուսայի, որ օր մը Աստուած այդ գործին համար, ինծի ճամբայ պիտի բռնար, սակայն երբեք մտքէս չէր անցներ որ այս գործը պիտի ըլլար Թեյլըր համալսարանին մէջ, և մանաւանդ ան պիտի ներկայանար յանկարծակի և այդպիսի չլուծած ձեւով: Արդարեւ

գործը մեզի պարտադրուած էր սակայն մենք հաւատք ունէինք այն Աստուծոյն որ կերակրեց Եղիան հեղեղատին քով, և շատցուց Սարերթացի որբեւայրիին իւզն ու ալիւրը, և զրեցինք Եզր. Մէրրըթին որ զրկէ զայն, և Աստուած պիտի հոգայ զինքը: Ան հասաւ Դեկտեմբեր ամսուն և անմիջապէս թէ աշակերտներուն և թէ ուսուցչաց հետաքրքրութեան առարկայ դարձաւ,

«Ահա տփրիկեցի աղայ մը, որուն արեան հարազատութեան վրայ ո՛չ մէկ կասկած կար: Իր գոյնին վրայ երկու գաղափար չկար, որովհետեւ ո՛չ մէկ ազուաւ, աւելի սեւ էր քան ինքը: Իր շրթունքները հաստ էին, քիթը տափակ և լայն իր ցեղին ծայրայեղ տարօրինակութիւնները գահացնելու համար: Ասով հանդերձ իր շեշտն ու հնչիւնը բոլորովին մեզի օտար էին: Ոչ ամէրիկեան խափշիկին և ոչ ալ ուրիշ օտարներուն հնչիւնին չէր նմաներ:

«Քիչ մը տեղեկացանք իր պատմութեան, և ան հրաշալի կերպին որով Աստուած ապահոված էր իրեն ճամբայ՝ Ովկիանոսի մէջէն, սակայն բոն մը չէինք գիտեր այդ ընտրեալ հոգիին՝ սեւ ի մէջ հրեշտակի մը մասին, որ մեր մէջն էր: Կարծեմ թէ իր հետաքրքրութիւնն ալ մերինին չափ մեծ էր, որովհետեւ ամէն ինչ նոր էր իրեն: Զինքը ծանօթացուցինք իր հազուադէպութեան և ուսելիքներուն հետ և ըսինք թէ ինչպէս պէտք է ուսէր ամերիկեան ձեւով:

«Իր համակուէն քիչ ետքը, թերթի մը մէջ ծանուցի այս դէպքը, և հրաւիրեցի որ, ով որ կը մղուի մէյ մէկ տուր զրկէ իր դպրոցական ծախքերուն համար: Տասներեք հոգի պատասխանեցին այս հրաւերին, և զրկուած դրամը գործածուեցաւ իրեն սենեակ մը շտակելու և իր գիրքերը գնելու:

«Դօլէճին մէջ ննջասենեակ մը տալու համար զինքը սենեակս կանչեցի և հարցուցի. «Սամմի ի՞նչ սենեակ տամ քեզի» : «Օ՛, Մը. Բիտ պատասխանեց — ան, որեւէ սենեակ ինծի համար ողէկ է, եթէ կայ սենեակ մը որ մէկը չուզեր տանել, անիկա ինծի տուր» Ես երեսս դարձուցի, որովհետեւ աչքերս արցունքով լեցուած էին։ Ինքնիրենս հարցուցի, արդեօք ես կ'ուզէ՞ի տանել այն բանը, որ ուրիշները չեն ուզեր։ Իմ փորձառութեանս մէջ, որպէս ուսուցիչ, տո՛րթն ունեցեր եմ հազարէ աւելի տարբեր աշակերտներու սենեակ որոշելու։ Մեծաւ մասամբ անոնք քրիստոնեայ, ազնիւ երիտասարդ տղաք և տղջիկներ էին, սակայն Սամմի Մօրիս անոնց մէջ միակն էր որ ըսաւ. «Եթէ կայ սենեակ մը որ մէկը չուզեր տանել, անիկա ինծի տուր» :

«Իր դասերը, անշուշտ, նախնական էին, և ինքը չէր կրնար մանել որեւէ դասարան, այսպէս ուսուցիչներ և ուսանողներ իրարու հետ կը մրցէին իրեն դաս տալու գործին մէջ։ Տօգ. Սթիմլին աղջիկը և իմ տղջիկս կը մասնակցէին այդ գործին, և այնքան եռանդով, որ կարծես իրական միսիօնարներ եղած ըլլային։ Տեսած եմ Տօգ. Ֆրայը, այն ընդարձակ և զանազան հմտութեանց մարդը, որ փիլիսոփաներուն դաս կրնար տալ, ծռած այս սեւ տղուն վրայ կը սորվեցնէր իրեն Սբ. Գիրքը։

«Թէպէտ Թէյլըր Համալսարանը միշտ բոց եղած է ամէն սեւէ մարդոց, բոլոր յարանուանութեանց, ամէն ցեղի և գոյնի, կարծեմ Սամմի առաջին խափշիկն էր որ ընդունուած էր մեր սրահները։ Կը փափաքիմ հոս յիշել ի պատիւ ուսուցչաց ժողովին և ուսանողաց, թէ եթէ ան Ամերիկայի նախագահին աղան ըլլար,

ասկէ աւելի մեծ քաղաքավարութեամբ չպիտի վարուէին իր հետը։ Ան սիրուած և յարգուած էր ամէնուն կողմէ։

«Սամմին մեր մէջ գտլէն քանի մը շաբաթ ետքը ես գիւղի մը մէջ կը քարոզէի, քարոզէն վերջը համառօտ տեղեկութիւն մը տուի ափրիկեցի այս տղուն վրայ և ըսի թէ՝ քոնի որ մասնաւոր ֆօնտ մը չունէինք զիսքը ապրեցնելու, հաւատքով ընդունած ենք զինքը։ Ժողովէն վերջ եղբայր Թօմաս մը կէս տոլար մը սահեցուց ձեռքս, և հետեւեալ առտու երբ շոգեկառք նստելու համար կ'երթայի եղբայր Քէյլէր մը կանչեց իր խանութը և հինգ տոլարնոց պանքատմս մը տալէն ետքը ըսաւ. «Հոգին կ'ըսէ որ տաիկա տամ քու հաւատքի ֆօնտիդ»։ Տաւացի կերպով ճշմարիտ է, որ այս հաւատքի ֆօնտը՝ որ ծագում առած էր Սամմի Մօրիսը պահելու համար, յեղաշրջած է Թէյլըր Համալսարանը։ Միսիօնարութեան և քարոզչութեան համար իր սրահներուն մէջ ուսած աշակերտաց թիւէն ան կրնայ կոչուել Աստուածաբանական Դպրոց, և դըպրոցին այս մասը մեծցած է իբր արդիւնքը՝ հաւատքի ֆօնտին։ Անշուշտ եթէ Սամուէլ Մօրիս ուրիշ միսիօն մը չունենար, տաիկա լիուլի պիտի արդարացնէր հաւատքը որ ունեցաւ Աստուծոյ կոչումին մէջ։

Լաւ Աւակեթս մը. — «Սամմի մեզի հետ եղած տանն շատ կը սերտէր և կը սորվէր արագ և եթէ ապրելու ըլլար իր ժողովուրդին մէջ ազդեցիկ ուսուցիչ մը և քարոզիչ մը պիտի ըլլար։ Ան մասնաւոր Սբ. Գրոց վրայ ծանօթութիւն ստանալու տտակ էր և ճշմարտութիւնը արտայայտելու իր ինքնայատուկ և ինքնատիպ ձեւին մէջ եզակիանօրէն ուրախ էր։

Աղօթի զաւակ մը. — Ան աղօթքի զաւակ էր : Յաճախ իր գտնուած սենեակը գացեր և լսեր եմ, «Հօրը հետ խօսիլը» : Աղօթքի մէջ հանդարտ և բընական էր, կարծես թէ ինծի հետ կը խօսէր : Տառացիօրէն ան Աստուծոյ հետ կը խօսէր : Ես լսած եմ իր աղօթքը շատ կանուխէն, դեռ միւս աշակերտները քունի մէջ եղած ատեննին : Ես լսած եմ իր աղօթելը գիշերուան շատ ուշ ատեն, երբ միւսները խորունկ քունի մէջ էին : Ես դուռը բացած եմ կամայ մը նա-յած այն սրտուանդ դէմքին որ դարձած էր դէպի երկինք, սակայն ինքը երբեք չէր խանդարուէր : Իր Աստուծոյ հետ խօսակցութեան մէջ վերացած ըլլալով իմ ներկայութիւնս չէր զգար : Իր ուսը կ'զգացուէր դպրոցին մէջ, մենք ամէնքս զգացինք և աւելի աղէկ քրիստոնեաներ եղանք :

«Իր գպրոցի ընկերներէն Թոմաս Նիւպըն կ'ըսէ որ, «Յաճախ իր սենեակը կ'երթայի և զինքը իր սենեակին մէջ կը գտնէի աղօթելու վրայ՝ լսելի ձայնով : Ան երբեք կարեւորութիւն չէր տար երբ դուռը զարնուէր, այլ կը շարունակէր իր խօսքը Աստուծոյ հետ մինչեւ որ յագենար իր հոգին, յետոյ կուգար ժպտելով դուռը և կ'ըսէր, «Հիմա ներս եկուր, այս անգամուան համար խօսիլը լինցուցինք» :

Ան կը սիրէր իր Սբ. Գիրքը. — «Սամմի կը սիրէր իր Սբ. Գիրքը, և ոչ թէ միայն ինքը կը կարդար կամայ և կրցածին չափ աղէկ, այլ որեւէ մէկը որ իր սենեակը գար քանի մը վայրկեան անցնելու, կը խնդրէր անկէ որ գլուխ մը կարդայ իրեն համար : Օր մը երիտասարդ մը եկաւ, որ քրիստոնեայ չէր, խնդրեց իրմէ որ գլուխ մը կարդայ իրեն համար : Երիտա-

սարդը կը մերժէ ըսելով որ Սբ. Գրքին չհաւատար «Ռ'նչ, ըսաւ Սամմի, չե՞ս հաւատար Սբ. Գրքին : Բու հայրդ կը խօսի ու դուն չե՞ս հաւատար Անոր : Եղբայրդ կը խօսի ու դուն չե՞ս հաւատար : Արեւը կը փայլի և դուն չե՞ս հաւատար : Աստուծոյ քու հայրդ, Գրիստոս քու եղբայրդ և Սբ. Հոգին քու Արեւդ : Ես պիտի աղօթեմ քեզի համար» : Եւ ան աղօթեց ու երիտասարդը փրկուեցաւ :

«Հինգշաբթի երեկոյէն մինչեւ Շաբաթ առաւօտը, ո՛չ կտոր մը հաց կ'առնէր և ոչ ալ կոթիլ մը ջուր, սակայն իր գործը կը շարունակէր և կ'երեւնար այնպէս երջանիկ և ուրախ, որ մէկը չէր գիտէր թէ ինքը ծամապահութիւն կ'ընէ, ի ըստ առեալ անոնցմէ, որոնք չէին տեսներ զինքը սեղան եկած :

«Շատ կը սիրէր մեր երկիրը և խորապէս կը գընահատէր մեր քրիստոնեայ քաղաքակրթութիւնը : Որքան շատ կը հակադէր իր երկիրը մերինն հետ : Անգամ մը քննակիքի ինկի (չնորհակալութեան օր) իրիկուն մը, հարցուցի իրեն թէ՝ ո՛ր երկիրը աւելի շատ կը սիրէր : Այն օրը ըստ ընկալիս աւելորդեան հնդկահաւ կերած էինք : Սամմի տոնաց վայրկեան մը խորհելու պատասխանեց ժպտելով. «Ո՞րը աղէկ է, Մր. Րիտ, խորոված հնդկահաւ թէ հում կապիկ» : «Ինչո՞ւ, Սամմի, ըսի ես, դուք կապիկ չէք ուտեր» : «Ո՛հ, այո՛, Մր. Րիտ, պատասխանեց ան, ես շատ կապիկ կերած եմ և հում կերած եմ» : «Ան թէպէտ շատ կը սիրէր մեր երկիրը, այսու ամենայնիւ շատ կը փափաքէր ուսումը լրացնել և վերադառնալ իր ժողովուրդին քարոզելու : Կ'ըսէր որ երբ վերադառնայ պիտի նուիրուի իր ցեղին պատիկներուն : Զանոնք պիտի նստեցնէր իր շուրջը աւաղին վրայ շրջանակի և

պիտի խօսէր անոնց Յիսուսի վրայ: Անոնք ինծի հոյ-
րիկ պիտի կոչեն, կ'ըսէր, սակայն այդ հոգս չէ: «Երբ
Յիսուսի մասին խօսիմ, շատ չանցած անոնցմէ ոմանք
պիտի երթան մացառները և ես պիտի գիտնամ թէ
ինչ է անոր նշանակութիւնը: Երբ անոնք կրկին գտն
շատ պիտի ուրախանան»: Սակայն այս երջանիկ երազը
չպիտի իրականանար: Ան պիտի քարոզէր իր ժողովուր-
դին, տարակոյս չկայ. սակայն ստիկա պիտի ընէր
ուրիշներուն միջոցաւ, որոնք պիտի մղուէին իր կեան-
քովը և աղբեցութիւնովը սրտին այնքան սիրելի այս
գործը յանձն առնել:

«Իր բացատրելու կարողութիւնը արդարեւ հիա-
նալի էր: Գիշեր մը ուսանողաց ազօթժողովին մէջ
եկաւ և ըսաւ. «Հացը բան մըն է, քարը աւելի տար-
բեր բան մը: Ես անգամ մը տեսայ քար մը, որ ոսկի
ուէր իր մէջը, և ինծի ըսին թէ տաիկա քանի մը
տակառ ալիւրէ աւելի արժէքաւոր է: Սակայն երբ ես
անօթի եմ չեմ կրնար ուտել քար, հաց պէտք է ին-
ծի, այսպէս իմ հոգիս չի կրնար գոհանալ Յիսուսէ զատ
ոչ մէկ բանով, որ կենաց հացն է»:

«Ուրիշ և անվիճելիօրէն ինքնատիպ խօսք մը հե-
տեւեան է. «Կրօնական կեանք ապրիլ՝ միա ուտելու
կը նմանի: Միայն մէկ մասը կարմիր է և դուք շատ
կը սիրէք զայն, ուրիշ մասերը ճարպոտ են և դուք
զանոնք չէք սիրեր: Սակայն, կրօնքը, ունի իր ուրա-
խութիւնները և խաչերը. դուք կը սիրէք ուրախու-
թիւնները և կը խորշիք խաչերէն, սակայն դուք պէտք
է ունենաք երկուքն ալ, զօրաւոր և առողջ քրիստո-
նեաներ ըլլալու համար»:

Ան հոգի տանող մըն էր: «Օր մը ինծի եկաւ և ը-

սաւ. «Մը. Բիտ կրնամ ձգել դպրոցը և երթալ գոր-
ծելու»: «Ինչո՞ւ, Սամմի, հարցուցի, դժգոհ ես այս
դպրոցէն»: Ո՛չ, ո՛չ, պատասխանեց, ես դպրոցը շատ
կը սիրեմ, սակայն կ'ուզեմ գործել և դրամ շահիլ,
Հէնրի Օնէյլը հոս բերել տալու համար»: «Ո՞վ է այս
Հէնրի Օնէյլը», հարցուցի ես. «Անիկա եղբայրս է,
ի՞Տէր, ես զինքը առաջնորդեցի Յիսուսի: Ան լաւ տղայ
է, Սամմիէն աւելի լաւ. ան Աստուծոյ մօտ կը քալէ
կ'ուզեմ որ ան գայ և ուսանի»: «Լաւ, Սամմի, ըսի
ես, եթէ ան պէտք է որ գայ Ամերիկա, Տէրը ճամբայ
պիտի բռնայ: Խօսէ քու հօրդ այդ մասին»: Գրեթէ
ան անմիջապէս քաշուեցաւ իր սենեակը ազօթելու:
Այն իրիկունը նամակ մը գրեցի Միսիս Տէյթի, որ իր
ամուսինով միասին Արիկէի մէջ միախնար եղած
էին մինչեւ իր ամուսնոյն մահը, այն հետեւ երկրին
մէջ: Հէնրի Օնէյլ անոնց ծառայութեան մէջ գտնուե-
ր և ես գրեցի որ արդեօք կարելիութիւն մը կա՞ր
Հէնրին բերելու այս երկիրը՝ Հետեւեալ առաւ Սամ-
մի եկաւ իմ գրասենեակս, երեսը ուրախութենէն կը
փայլէր: «Մը. Բիտ ըսաւ ինծի՝ այսօր շատ ուրախ եմ:
Հայրս կ'ըսէ թէ Հէնրի պիտի գայ»: Անկից, մի քանի
օր վերջը Միսիս Տէյթէն նամակ մը ստացայ, ուր կ'ը-
սէր թէ պէտք եղած կարգադրութիւնները ըլլալու
վրայ են արդէն Հէնրին մեր դպրոցը զրկելու համար:
Մի քանի ամսուան մէջ ան եկաւ, և ժամանակ մը յե-
տոյ վերադարձաւ քարոզելու իր ժողովուրդին: Անի-
կա Սամմի Մօրիսին հաւատաքին կրօնայրին էր: Ան
ուսանող էր Թէյլըր համալսարանին մէջ Սամմիյին
հետ:

«Ոչ մէկ աշակերտ Սամմիին չափ լայնօրէն ճանչ-
ցուեցաւ համալսարանին մէջ: Բոլոր զինքը տեսող-

ները ազդուեցան պարզ և վսեմ հաւատքէն առ Աստուած և չարմեցան իր նուիրուած կեանքի պատմութենէն։ Անոնք պատմեցին զայն ուրիշներուն և ինքը եղաւ հանրածանօթ մէկը տարբեր նահանգներու մէջ գլխաւոր ժողովուրդներուն նամակներ կուգային մեզի հարցնելով իր մասին, և շատ մը քաջալերական խօսքեր իրեն՝ մեր միջոցաւ։ Շատեր իր պատկերը ուղեցին և ես շատ դժուարաւ համոզեցի զինքը պատկեր մը քաշուելու։ «Իմ պատկերս շատ ազնիւ է, կ'ըսէր ան»։ Եւ օր մը բացազանչեց. «Ո՛հ, երանի թէ անոնց կարենայի զրկել Յիսուսի պատկերը»։

«1893ի ձմեռուայ երկար պաղին, երկու եկեղեցիներու մէջ տեղի ունեցող արթնութեան ժողովներուն կանոնաւորապէս ներկայ կ'ըլլար Ո՛հ մէկ գիշեր այնքան մութ, ցուրտ և փոթորկալից էր զինքը ես կեցընելու աստիճան։ Իր անկեղծ սեղմքը օրհնութիւն մըն էր, իր պարզ սիրտը ճշմարտութեան համար տենջացող՝ ներշնչւած մըն էր պաշտօնակցին համար՝ իր ամենալաւը ընելու, սակայն մեր կլիման շատ զօրաւոր եկաւ իրեն համար։ Եկած ըլլալով երկրէ մը ուր ձիւն անձանօթ էր, չէր կրնար առկալ օդի մը՝ որ 20-25 աստիճան զէրօէն վար ցուրտ էր։

Կը հիւանդանայ.— «Յունիտրին մէջ սաստիկ պաղ առաւ, թէպէտ աշխատելու անկարողութեան չդատաւարտեց զինքը, սակայն չկրցաւ օձիքն աղտակ անկէ։ Վերջապէս հիւանդութիւնը դարձաւ ջրագողութեան։ Իր հիւանդութեան լրջութիւնը մեր հասկնալէն շատ առաջ, ան մեզի ըսաւ թէ իր Տէրը զինքը կը կանչէ, և պէտք էր երթալ։ Երբ ես խօսեցայ իրեն այն դժբերան մասին զոր կաթողին կը յուսար ընել իր

ժողովուրդին մէջ, «Ուրիշներ աւելի ալէկ կրնան ընել, ան իմ գործս չէ, այլ Քրիստոսին, Ան պէտք է ընտրէ իր գործաւորները, պատասխանեց»։ Ան կրեց իր հիւանդութիւնը համբերութեամբ, ուրախութեամբ. ան երբեք չխօսեցաւ ցաւին վրայ կամ իր յուսախաբութեան վրայ։ Գիշերները երբեք շատ երկար չէին, իր ջերմը երբեք շատ բարձր չէր։ Ան միշտ կը խօսէր գոհունակութեամբ թէ՛ Յիսուս զիջանեցաւ զալու և իր հետը կենալու։ Անգամ մը հարցուցի թէ՛ մահէն չէ՞ր վախար։ Ան խնդալով ըսաւ. «Ո՛հ, ո՛չ, Մ. Բիւր, Յիսուսը գտնելէս ի վեր մահը ինձի բարեկամ է»։

Իր վերջին ժամերը.— «Մեռած օրը քովն էինք քանի մը հոգիներ և աղօթեցինք իր հետը։ Իր դէմքը կը ճառագայթէր։ «Ո՛հ ըսաւ ան, այնքան երջանիկ եմ. հիմա կը հասկնամ ամէն բան։ Ես տեսայ հրեշտակները և անոնք քիչ ատենէն պիտի գոն լինաւոր»։ Այն կէսօրէն վերջը անոնք եկան։ Մայիսին մէջ օր մըն էր ան, Յիսուսի հետ դիմաւորեց մահը, այն հանդարտութեամբ ինչպէս կը դիմաւորէր իր ուսուցիչները, զորս այնքան շատ սիրեց։

Համալսարանի ուսանող ընկերներէն Եօտէր որ վերի վերջին ժամերուն մէջ տեղի ունեցած պարագան պատմեց ինձի կ'ըսէր. «Երբ ես եւ եղբ. Շէփըրտ ժուռ կուգայինք սալոյատակին վրայ, իր դագաղին քով գիշերուան մէկ պահուն, կը հարցնէինք իրարու, «Ինչո՞ւ համար այս սուրբ կեանքը այնքան կարճ կտրեցաւ»։ Եղբայրը պատասխանեց. «Ծաղիկներ կան որոնք այս աշխարհի վրայ բացուելու համար չառաքելեցին»։

«Արդիւնքը կը ցուցնէ թէ այս կեանքը գետին

ինկած և թաղուած է որպէսզի մինակ չմնայ այլ շատ պտուղ տայ: Այս պարզ պատմութիւնը իր կեանքին՝ կը ներշնչէ մարդոց ամէն տեղ գործածելու համար այն չերկմտող հաւատքը, որը տակաւին կը գործէ հրաշալիօրէն չօրը անունով:

Փոխադրուած.— «Ան Աստուծոյ հետ քաղեց և չէր գտնուէր, որովհետեւ Աստուած առաւ զայն»: Այս պէս վերջացաւ այս սքանչելի կեանքը: Հազար սրտեր վշտով լեցան էին, որովհետեւ մենք ամէնքս կը սիրէինք զինքը, և մեզմէ չատերը համար զարմանքի մէջ էինք, նախաինամութեան հանդէպ, որ այսպէս շուտ վախճան մը տուաւ այսպիսի կեանքի մը՝ որ շատ օգտակար ըլլալ կը խոստանար: Իր և մեր ծրագիրներ վայրկեանի մը մէջ փշրուած էին: Աստուծոյ ճամբաները մերինէն աւելի բարձր և ազէկ են:

Սամմիին յաղարկաւորութիւնը կատարուեցաւ Պէրրի փողոցի եկեղեցւոյն մէջ որուն անդամն էր ինքը: Սոյն քաղաքին մէջ իմ տեսած միւս յաղարկաւորութիւններուն մեծագոյններէն, և շատ աւելի կարեկցութիւն հրաւիրող յաղարկաւորութիւն մը եղաւ սօսկա: Եկեղեցին խռնուած էր ամպիոնէն մինչեւ փողոցը, հարիւրաւորներ պաշտամունքի տեւողութեան՝ դռնէն դուրս սպասեցին: Եւ զօրաւոր մարդիկ այն օրը խոնարհեցուցին իրենց գլուխը, և չատեր լացին որոնք լալու վարժ չէին: Ինչո՞ւ սասակայն: Ասիկա Ափրիկեցի խեղճ տղայ մըն էր միայն: Ճշմարիտ է, բայց շատեր կ'զգային թէ անոր մէջ տեսած և սովորած են աւելի հաւատք, աւելի նուիրում և Աստուծոյ փրկարար զօրութիւնը: Ան մեծապէս օրհնուած էր Աստուծմէ, և շատերուն եղած էր օրհնու-

թիւն մը:

Մենք զինքը դրինք հողին տակ հանգչելու՝ շատ արցունքներով, սակայն այն քաղցր վատահոսութիւնով թէ՛ իր մաքուր հոգին մտած է Թագաւորին Քաղաքը:

«Մեր սիրելի քոյր Սթիմըն յարմար յուշարձան մը կանգնեցուց իր դամբանին վրայ: Ո՛չ մէկ գերեզման իրենին չափ այցելուներ ունի, իրենին չափ արցունքներով թրջուած է: Ինչո՞ւ սակայն. ո՞հ, որովհետեւ Սթ. Հոգին անոր վրայ հանգչած էր, և ամէն մարդ կ'զգար թէ՛ Աստուած մասնաւոր դրոշմ մը դրած էր իր վրան:

Ափրիկէի համար կամաւորներ.— «Սամմիին մահուան յաջորդող հինգշաբթին՝ մեր ուսանողները կ'ունենային իրենց սովորական տղթաժողովը, և հոն ներկայ եղողներէն իւրաքանչիւրը խօսեցաւ իր տեսած մէկ օրհնութեան կամ դասի մը վրայ, այս նուիրում տրուէ կեանքէն: Ամէնէն վերջը՝ ժողովին վերջաւորութեան, երիտասարդ մը ելաւ յուզուած վիճակի մը մէջ և ըսաւ. «Այս վայրկեանին ծանրօրէն կ'զգամ, թէ պէտք է ինձի երթալ Ափրիկէ՛: Սամմիին տեղը, և կ'ողորձեմ որ, ինչպէս իր գործը ինկաւ իմ վրայ, նաեւ իմայ իր հաւատքին վերարկուն տլ՝: Հազիւ թէ նստած էր, ուրիշ մը և երրորդ մը ելաւ և յայտնեցին միեւնոյն փորձառութիւնը և փափաքը: Սյապէս, մէկին տեղ այն վայրկեանէն սկսեալ, երեք հոգի պատրաստուեցան երթալու Ափրիկէ: «Թեպէտ մեռաւ բայց ցականին կը խօսի:»

ԵՐԹԱՍ ԲԱՐԵԱԻ ՔԱՋ ՍԻՐՏ

Օր մը Սամմի ինձի եկաւ խնդալով և ըսաւ. «Զեմ



կարծե՞ր որ երկնքի մէջ տւելի շատ պիտի սիրեմ իմ
ուսուցիչներս քան ինչպէս այժմ կը սիրեմ քեզ, Տօգ.
Սթիմընը և Միս Հէսթըտը, սակայն հոն պիտի սոր-
վիմ տւելի տրագ և չպիտի ըլլամ այսպէս համր» :
Այո՛, Սամմի, դուն տրդէն սորված ես այնպիսի դա-
սեր, որոնց մենք տակաւին օտար ենք : Դուն նայած
ես Թագաւորին իր գեղեցկութեանը մէջ, և խմած ես
այն գետէն, որուն ջուրերը Աստուծոյ քաղաքը կ'ու-
րախացնէ :

Թարգմ. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Վ Ե Ր Զ



ՀՀ Ազգային գրադարան



NL0031852

2013

3p
3p
Հաղէ՛

K. T. S A R I A N,
2 Rue Ahmed Pasha Hassanen,
Shoubrah, Cairo.
Egypt.



PRINTED IN EGYPT BY
SAHAG-MESROB PRESS
25 SH. TEWFIK CAIRO.